| | | |
|---|---|---|
| AMERIABANK | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | 11RBD PL 72-03-02 |
| ԲԻԶՆԵՍԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ | | Խմբագրություն 51 |
| | | Ուժի մեջ է՝ 09.03.2022թ-ից |

**7. Մաքսային քարտով մանրածախ բիզնես վարկային գծեր (Arca classic)**

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Վարկատեսակ | Մաքսային քարտով մանրածախ բիզնես վարկային գծեր (Arca classic) | | |
| | Նպատակ | Մաքսային վճարումներ | | |
| | Հաճախորդներ | Առնվազն 6 ամիս գործունեություն ծավալած իրավաբանական անձիք/անհատ ձեռնարկատերեր | | |
| | Ոլորտային սահմանափակումներ | Չֆինանսավորվող ոլորտների ցանկ | | |
| | Վճարունակության գնահատում [1] | Ըստ սահմանված ցուցանիշների | | |
| Վարկի պայմաններ | Արժույթ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
| Վարկի պայմաններ | Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ | • Ամերիաբանկում գործող հաշիվներով իրականացվող վերջին 6-12 ամիսների ամսական միջին շրջանառության մինչև 40%-ը, 1,000,000 - 20,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք այլ արտարժույթ<br>• Առնվազն 3 ամիս Ամերիաբանկում շրջանառություն իրականացրած հաճախորդների համար սահմանաչափի որոշման հիմք է հանդիսանալու Ամերիաբանկում իր հաշվեհամարներով 3 ամիսների իրականացված զուտ շրջանառությունը և դրան նախորդող առնվազն 3-9 ամիսների այլ բանկերի հաշվեհամարներով իրականացված զուտ շրջանառությունը, 1,000,000 - 20,000,000 ՀՀ դրամ/ պայմանով, որ այլ բանկերում իրականացված շրջանառությունը տեղափոխվի Ամերիաբանկ | | |
| Վարկի պայմաններ | Ժամկետ (ամիս) | 12 ամիս | | |
| Վարկի պայմաններ | Տարեկան տոկոսադրույք | ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի դեպքում վարկերը տրամադրվում են արտոնյալ ժամկետով: Արտոնյալ ժամկետի ընթացքում պարտավորությունը ամբողջությամբ չմարելու դեպքում, իսկ ՀՀ դրամով վարկերի դեպքում գումարի օգտագործման առաջին իսկ օրվանից օգտագործված գումարի նկատմամբ կիրառվում է հետևյալ տոկոսդրույքը՝ | | |
| Վարկի պայմաններ | Տարեկան տոկոսադրույք | 14.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 16.9%) | 11.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 13.4%) | 10.0%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 11.8%) |
| Վարկի պայմաններ | Տարեկան տոկոսադրույք | ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի դեպքում արտոնյալ ժամանակահատվածին հաջորդող ամսվա ընթացքում պարտավորությունը ամբողջությամբ չմարելու դեպքում հաջորդ ամսից այդ պահին օգտագործած գումարի վրա հաշվարկվում է՝ 20%: | | |
| Վարկի պայմաններ | Վարկի տրամադրման վճար | 1% վարկի գումարից | | |
| Վարկի պայմաններ | Վարկի պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճար | Չի կիրառվում | | |
| Քարտի պայմաններ | Քարտի թողարկում | Անվճար | | |
| Քարտի պայմաններ | Քարտի տարեկան սպասարկում | 10,000 ՀՀ դրամ, 3 ամսից ավել սպասարկվող հաճախորդների համար՝ անվճար | | |
| Քարտի պայմաններ | Հավելյալ քարտի թողարկում | Անվճար | | |
| Քարտի պայմաններ | Հավելյալ քարտի տարեկան սպասարկում | 5 000 դրամ | | |
| Քարտի պայմաններ | Քարտի վերաթողարկում (կորստի, վնասման հափշտակման, PIN-ի կորստի կամ երրորդ անձանց հայտնի դառնալու դեպքում) | 5 000 դրամ | | |
| Քարտի պայմաններ | Քարտի վերաթողարկում (քարտի ժամկետի լրացման դեպքում) | Անվճար | | |
| Քարտի պայմաններ | Քարտի բլոկավորում | Անվճար | | |
| Քարտի պայմաններ | Քարտի ապաբլոկավորում | Անվճար | | |
| Քարտի պայմաններ | Կանխիկի տրամադրում | Չի թույլատրվում | | |
| Քարտի պայմաններ | Մաքսային տերմինալներում անկանխիկ գործարքներ | Անվճար | | |
| Քարտի պայմաններ | Այլ առևտրի կետերում անկանխիկ գործարքներ | 3% | | |
| Քարտի պայմաններ | Քաղվածքի տրամադրում կամ ուղարկում էլեկտրոնային փոստով | Անվճար | | |
| Քարտի պայմաններ | Քարտի վարկային սահմանաչափի վերանայում | 3 000 դրամ | | |
| Քարտի պայմաններ | SMS հաղորդագրությունների ուղարկում | Անվճար | | |
| Վարկի մարման եղանակներ | Վճարման արտոնյալ ժամկետ | Գումարի օգտագործման ամսվա վերջին օր + 5 օր | | |
| Վարկի մարման եղանակներ | Մարման եղանակ առանց վճարման արտոնյալ ժամկետի | Վարկի մայր գումարը մարվում է ժամկետի վերջում:Տոկոսագումարները վճարվում են ամենամսյա պարբերականությամբ, ընդ որում, քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ իրականացվում է այդ պահին հաշվարկված տոկոսների գանձում: | | |
| Վարկի մարման եղանակներ | Մարման եղանակ վճարման արտոնյալ ժամկետի դեպքում | Տոկոսների մարում ժամկետի վերջում, ընդ որում, քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ իրականացվում է այդ պահին հաշվարկված տոկոսների գանձում:<br>Վարկի մայր գումարի մարում ժամկետի վերջում: | | |
| Ապահովվածություն | Ապահովվածության նկարագրություն | 1. Հաշիվների շրջանառության գրավ<br>2. Բիզնեսի հիմնադրի և իրական շահառուի անձնական երաշխավորություն<br>3. Բանկը կարող է պահանջել նաև այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն, ընդ որում՝ երաշխովորի եկամտի աղբյուրը պետք է լինի տվյալ բիզնեսից անկախ և երաշխավորի վարկային պատմության մեջ էական ուշացումներ չպետք է լինեն (վերջին 2 տարվա ընթացքում առավելագույն ուշացումը 30 օր, բայց անընդմեջ ոչ ավելի, քան 10 օր): | | |

| | | |
|---|---|---|
| | Վարկի պայմանների փոփոխություն [2] | 25,000 ՀՀ դրամ |
| | Վարկի մարման օրվա փոփոխություն | 10,000 ՀՀ դրամ |
| | Վաղաժամկետ մարում | Վաղաժամկետ մարման տուժանք կամ վճար չի կիրառվում |
| | Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ | Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:<br>Տույժ՝ ժամկետանց Վարկի և տոկոսագումարի 0 .13 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար: |

[1] Դրամական միջոցով և ոսկու առարկայազուրկ մետաղական հաշվով ապահովված վարկերի դեպքում վարկունակության ցուցանիշներ չեն հաշվարկվում, հետևաբար բիզնես վերլուծություն և եկամուտը հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

[2] Սակագինը կիրառվում է հաճախորդի նախաձեռնությամբ փոփոխությունների իրականացման դեպքում: Եթե 1 փոփոխության արդյունքում գանձման ենթակա է մի քանի սակագին, ապա գանձվում է ամենաբարձր սակագինը՝ 1 անգամ: Սակագները կիրառելի չեն դրամական միջոցների, պարտատոմսերի, առարկայազուրկ մետաղական հաշիների գրավով վարկերի համար: Եթե փոփոխությունների շրջանակներում իրականացվում է նոր գրավի ավելացում կամ երաշխավորի ավելացում, ապա սակագինը չի գանձվում: